

Փ. Գ. ՍԱՐՈՎԻՆԱՆՅԱՆ, Հ. Մ. ՀԱՅԵՆՅԱՆ, Ռ. Ս. ՔԱՐԻՄՅԱՆ

ԸԱՔԱՐԱՄՆԿԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄՈՐՅՈ-
ՖԻԶԻԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միկրոբանիզմների տեսակի որոշումը միկրոբիոլոգիական դիմումում հարցերից մեջն է: Շաքարանկալին օրգանիզմների դասակարգումը արգած է շատ աշխատություններում: Հայտնի են Լոդերի (Lodder—1934), Դիդենսի և Լոդերի (Diddens und Lodder 1942), Լոդեր և Կրեգեր-Վան Ռիլի (Lodder and Kreger-Van Rij 1952), Կուդրյավցևի (Կուդրյավցև 1954) և այլոց որոշիչները:

Սովորական Միությունում այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Կուդրյավցեր՝ տալով սպորավոր շաքարանկերի որոշիչը:


Մենք ուսումնասիրել ենք Հայաստանի խաղողի տարբեր սորտերից ու նրանց գինիներից մեկուսացված շաքարանկերի մորֆոֆիզիոլոգիական հատկությունները և նրանց դասակարգել համապատասխան տեսակների: Ուսումնասիրության համար, որպես սննդամիջավայրեր, օգտագործել ենք Մալց-էքստրակտը և նրա ագարը, ինչպես նաև գարու ածիկի քաղցու-ագարը: Ուսումնասիրվող շաքարանկերի մանրամասն մորֆոլոգիական հատկանիշների տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

Ինչպես հայտնի է, Saccharomyces ցեղի համար կարևոր ցուցանիշ է նրա մեջ մտնող շաքարանկերի սպորագոյացումը: Փորձարկված բոլոր շտամները գելային թիթեղի և գիպսի բլոկների վրա առաջացնում են կլորավոն ասկուսպորներ (աղ. 2):


Ֆիզիոլոգիական հատկությունների ուսումնասիրության համար կարևոր հատկանիշ է շաքարանկերի վերաբերմունքը տարբեր ածխաջրատների, օրգանական թթուների, սպիրտների հանդեպ: Այդ ուղղությամբ հետազոտությունների արդյունքներն ամփոփված են աղ. 3 և 4-ում:

Դիմում շաքարանկերի տեղական շտամներն ընդունակ են նաև ընտելանալու շաքարի բարձր տոկոս պարունակող խաղողահյութին և առաջացնելու ավելի շատ սպիրտ (Սարուխանյան, Հախինյան—1955, 1959, Հախինյան—1958): Շաքարանկերի ընտելացած բջիջները շաքարի բարձր տոկոսի պայմաններում, իրենց բջջի մեծու-

թյամբ տարբերվում են ընտելացած շաքարասնկերից (աղ. 5), ընտելացած բջիջներն ալեհի խոշոր են, որը ցայտուն արտաճայտված է 1 և 2 նկարներում: Մեր նկարագրած՝ *Saccharomyces* ցեղին պատկանող տարբեր տեսակները, անկախ ընտելացումից, իրար հետ համեմատած, ունեն բջիջ տարբեր ձևեր (նկար 3):




Նկար 1. *Saccharomyces ellipsoideus* (vini) № 32 շտամբ ա—սկզբնային կուլտուրայի բջիջները. $\mu=40^{\circ}/_{\circ}$ շաբար պարունակող խաղողահամաց ընտելացված բջիջները:



Նկար 2. *Saccharomyces ellipsoideus* (vini) № 8 շտամբ ա—սկզբնային կուլտուրայի բջիջները. $\mu=40^{\circ}/_{\circ}$ շաբար պարունակող խաղողահամաց ընտելացված բջիջները:


Ինչպիս տեսնում ենք, փորձարկված շտամները շաքարի բարձր տոկոսին ընտելանալու դեպքում վերջինս ազդում է նաև նրանց մորֆոլոգիական հատկության վրա:



Նիս 3.


Շարապանակելի տարրեր անակնելի գեղազար
թթվածիկ ձև զարու ածիկ քաղցրութ

մ—Saccharomyces ellipsoideus Urf. ժիմ № 490 սառաւ



Շարապանակելի տարրեր անակնելի գեղազար
թթվածիկ ձև զարու ածիկ քաղցրութ
բ—Saccharomyces chodatii № 8 շառաւ

Στα πρώτα χρόνια της Ελληνικής Δημοκρατίας, η απόφαση για την επένδυση στην αγορά της Κύπρου ήταν μια από τις πιο δύσκολες και αποτελεσματικές στην ιστορία της χώρας.



Նկար 4. Շաքաբասնկերի տարշիք տեսակների էնվանիքիցների ձևը դարձուած ածիկի բացուում՝ *Saccharomyces oviformis* № 13 չումը

Աղյուսակ 2

Շաքաբասնկերի սպորառաջացման ունակությունը

Շաքաբասնկերի մակարդակ	Գելի թիմեզ:		Սոլորի մեծաւթյունը լոգ.		Արկագությունը
	դրա	դրա	դրա	դրա	
8	2-3	սպոր	2-3	սպոր	2,77
13	2-3	>	2-3	>	3,00
480	2	>	2-3	>	2,77
490	2-3	>	2-3	>	2,77
33	2-3	>	2-3	>	3,00
43	2-3	>	3-3	>	—
25	2-3	>	2-3	>	2,77
32	2-3	>	2-3	>	2,77

Աեր հետազոտած շաքարասնկերի տեղական շտամների մորֆո-ֆիզիոգիական հատկությունների ուսումնաբրությունները ցույց են տալիս, որ նրանք պատկանում են *Saccharomyces* ցեղի տարրեր տեսակներին: Այսպիս, օրինակ՝ շաքարասնկերի տեղական շտամներից ԱՆ 8 և 13-ն իրենց մորֆո-ֆիզիոլոգիական հատկություններով, ըստ Կուրրյավցեկի՝ համապատասխանում են *Saccharomyces* chodatii տեսակին, իսկ ըստ Լոդեր և Կրեգեր Վան Ռիյի՝ համապատասխանում են *Saccharomyces italicus* տեսակին: Նրանց բջիջները էլիպսաձև են: ԱՆ 8 շտամի բջիջը Մալց-էքստրակտի վրա ունի $3,85-7,7 \times 3,5-4,2$ բ. մեծություն, Մալց-ագարի վրա՝ $3,5-8,75 \times 2,8-5,25$ բ. մեծություն, իսկ գարու ածիկի քաղցուագարի վրա՝ $7,14 \times 3,5-3,85$ բ. մեծություն:

ԱՆ 13 շտամի բջիջը մեծությունը Մալց-էքստրակտի վրա $3,5-5,25 \times 3,5-3,5$ բ. է, Մալց-ագարի վրա՝ $7-10,5 \times 3,5-5,85$ բ. իսկ գարու ածիկի քաղցուագարի վրա՝ $3,5-7,7 \times 3,5-5,25$ բ:

Նկարագրված երկու շտամներն եւ Մալց-ագարի վրա տալիս են հարթ մակերեսով, սպիտակավուն գաղութներ, իսկ գարու ածիկի քաղցու-ագարի վրա՝ սպիտակ, հարթ մակերեսով և սղոցածն եղբերով գաղութներ, Մալց-էքստրակտի մեջ՝ լավ նստվածք, առանց փառի և առանց պղառության: ԱՆ 8 և 13 շտամները լավ են խմորում և յուրացնում զյուկովը, զալակովը, մալտովը, չեն խմորում և շեն յուրացնում սախարովը, ուաֆինովը, լակոսովը: Օրգանական թթուներից յուրացնում են քացախաթթուն և կաթնաթթուն, չեն յուրացնում սաթաթթուն, խնձորաթթուն, գինեթթուն, լիմոնաթթուն, իսկ սպիրտներից լավ են յուրացնում էթիլ սպիրտը, գլիցերինը, չեն յուրացնում մաննիտը, սորբիտը և դուցիտը:

Շաքարասնկերից ԱՆ 32, 33, 480 և 490 շտամներն իրենց մորֆո-ֆիզիոլոգիական հատկություններով դասվում են, ըստ Կուրրյավցեկի՝ *Saccharomyces* vinii տեսակին, իսկ ըստ Լոդեր և Կրեգեր Վան Ռիյի՝ *Saccharomyces ellipsoideus* տեսակին: Այս շտամները միմյանցից տարրերված են իրենց բջիջների մեծությամբ:

ԱՆ 32 շտամը Մալց-էքստրակտում ունի $7-8,75 \times 3,5-8,75$ բ. մեծություն, Մալց-ագարի վրա՝ $7-8,75 \times 3,5-5,25$ բ., իսկ գարու ածիկի քաղցու-ագարի վրա $3,5-8,75 \times 3,5-3,85$ բ. մեծություն:

ԱՆ 33 շտամի բջիջը Մալց-էքստրակտում ունի $3,5-8,75 \times 3,5-3,5$ բ. մեծություն, Մալց-ագարի վրա՝ $5,25-8,75 \times 3,5-7$ բ. է, իսկ գարու ածիկի քաղցու-ագարի վրա՝ $3,85-10,5 \times 3,5-7$ բ. մեծություն:

Համարված սպառհակուլիտիտի գույքը		Մալտոնի		Սալիմուզ		Բաբեկան		Լոկոմո	
Գույքի մասնակ	Գալակտոնոզ	Մալտոնի	Սալիմուզ	Բաբեկան	Լոկոմո	Գույքի մասնակ	Գալակտոնոզ	Բաբեկան	Լոկոմո
8	+	+	+	++	++	-	-	-	-
13	++	++	++	+++	+++	+	+	+	+
25	++	++	++	+++	+++	-	-	-	-
33	++	++	++	+++	+++	-	-	-	-
480	+++	+++	+++	++++	++++	+	+	+	+
490	+++	+++	+++	++++	++++	+	+	+	+
32	+	+	+	++	++	-	-	-	-
43	+	+	+	++	++	-	-	-	-

$h_{\lambda} / n \cdot n \omega h^{-d}$

$\tilde{G}_{\mu\nu\rho} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} \cdot \rho \cdot q^{\lambda} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} \cdot u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} \cdot \rho^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} \cdot u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}$

$\frac{G_{\mu\nu\rho} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$O \quad p \quad q \quad m \quad h \quad m \quad h \quad m \quad h \quad p$				$U \quad q \quad h \quad p \quad m \quad u \quad h \quad p$			
	$\frac{\rho^{u\lambda} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{q_{\mu} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{u_{\mu} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{u_{\mu} u_{\nu} u^{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{u_{\mu} u_{\nu} u_{\rho} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{u_{\mu} u_{\nu} u_{\rho} u_{\sigma} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{u_{\mu} u_{\nu} u_{\rho} u_{\sigma} u_{\tau} u^{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$	$\frac{u_{\mu} u_{\nu} u_{\rho} u_{\sigma} u_{\tau} u_{\lambda} u^{\lambda} u^{\lambda}}{h^4}$
8	+	+	+	-	-	-	+	-
13	+	+	+	-	-	-	+	-
25	+	+	+	-	-	-	+	-
32	+	+	+	-	-	-	+	-
33	+	+	+	-	-	-	+	-
480	+	+	+	-	-	-	+	-
490	+	+	+	-	-	-	+	-
43	+	+	+	-	-	-	+	-

№ 480 շաքարասնկի բջիջը Մալց-էքստրակտում ունի $4,2 - 7 \times 3,5 - 5,25$ ս. մեծություն, Մալց-ագարի վրա՝ $7 - 7,3 \times 3,5 - 4,2$ ս, դարու ածիկի քաղցու-ագարի վրա՝ $7 - 8,7 \times 3,5 - 7$ ս մեծություն: № 490 շտամի բջիջը Մալց-էքստրակտում ունի $3,5 - 5,25 \times 3,5 - 3,5$ ս. մեծություն, Մալց-ագարի վրա՝ $7 - 10,5 \times 3,5 - 3,85$ ս, դարու ածիկի քաղցու-ագարի վրա՝ $3,5 - 11,79 \times 3,5 - 3,85$ ս մեծություն:

U. S. JOURNAL 5

40 መስկሙ የወያዥ ማወጣውን በአማካይ ነው በዚህ የሚከተሉት ደንብ ተደርጓል

Համար №	Քընտեկլացված (ստուգիչ)		Բնտելացված	
	Լայնություն	Երկարու- թյուն	Լայնություն	Երկարու- թյուն
8	5,25	7,56	7,00	16,00
13	3,95	6,34	7,00	13,00
33	6,65	9,11	7,35	11,37
32	4,27	8,29	12,25	16,45
25	4,20	8,20	12,00	14,35
480	5,67	7,00	5,60	7,00
490	5,25	7,00	7,00	11,79

Saccharomyces ellipsoideus-ին պատկանող այս շտամների բջիջներն էլիպսաձև են: Մալց և գարու ածիկի քաղցու-ագարների վրա առաջանում են հարթ մակերեսով, սպիտակ ալիքավոր եզրերով փայլուն գաղութներ: Մալց-էքստրակտում աճելու դեպքում նրանք տալիս են լավ նստվածք՝ առանց պղտորության ու փափության:

Շաքարներից լավ են յուրացնում ու խմորում գլյուկոզը, գալակտոզը, մալտոզը, սախարոզը և ռաֆինոզի 1/3-րդ մասը։ Զեն խմորում լակտոզը։ Օրգանական թթուներից յուրացնում են քացախաթթուն, կաթնաթթուն (№ 32, № 480 և № 490 շտամներ՝ նաև խնձորաթթուն), չեն յուրացնում սաթաթթուն, լիմոնաթթուն և գինեթթուն։ Սպիրոտներից յուրացնում են էթիլ սպիրտը, գլիցերինը, չեն յուրացնում մաննիտը, սորբիտը և դուցիտը։

№ 25 շտամն իր մորֆո-ֆիզիոլոգիական հատկություններով, բայց կողերի և Կրեքեր Վան Ռիյի՝ դասվում է *Saccharomyces steineri* տեսակին, իսկ ըստ Վ. Ի. Կուպրյավցևի՝ այդ տեսակը չի նկարագրված։ Այս շտամի բջիջները համեմատաբար մանր էլիպսներ են, որոնք Մալց-էքստրակտում ունեն $3,5-5,25 \times 3,5-5,25$ մ.

մեծության. Մալց-ագարի վրա՝ $3,5-5,25 \times 3,5-4$ ս. և դարու ածիկի քաղցու-ագարի վրա՝ $3,85-5,25 \times 3,5-3,5$ ս. մեծություն, Մալց-ագարի և դարու ածիկի քաղցու-ագարի վրա առաջացնում են հարթ մակերեսով և հարթ եղբերով սպիտակավուն գաղութներ, իսկ Մալց-էրստրակտում տալիս են շատ նստվածք՝ առանց պղտորության ու փառի: № 25 շտամը շաբարներից լավ է խմորում և յուրացնում զլյուկովը, գալակտովը, մալտովը և սախարովը, չի խմորում ու չի յուրացնում ռաֆինովը և լակտովը, օրգանական թթուներից լավ է յուրացնում քացախաթթուն և կաթնաթթուն, իսկ սպիտներից էթիլ սպիրտը և զլիցերինը:

№ 43 շտամն իր մորֆոֆիզիոլոգիական հատկություններով, ըստ Վ. Ի. Կուլյալցիկի՝ գասկում է *Saccharomyces oviformis* տեսակին, իսկ ըստ Լոդեր և Կրեգեր Վան Ռիյի *Saccharomyces Pastorianus* տեսակին: Բջիջն էլիսածեկ է, նրա մեծությունը Մալց-էրստրակտում $5,25-7 \times 3,85-7$ ս. է, Մալց-ագարի վրա՝ $5,25-7,7 \times 3,5-5,25$ ս., իսկ դարու ածիկի քաղցու-ագարի վրա՝ $5,25-7 \times 5,25-7$ ս. Մալց-ագարի և դարու ածիկի քաղցու-ագարի վրա առաջացնում է հարթ մակերեսով և թույլ, սղոցաձև եղբերով գաղութներ: Մալց-էրստրակտում տալիս է շատ նստվածք՝ առանց պղտորության ու փառի: Շաբարներից լավ է խմորում ու յուրացնում զլյուկովը, մալտովը, սախարովը և ռաֆինովը, չի խմորում գալակտովն ու լակտովը: Օրգանական թթուներից լավ է յուրացնում քացախաթթուն, կաթնաթթուն, չի յուրացնում սաթաթթուն, գինեթթուն և լիմոնաթթուն: Սպիրտներից լավ է յուրացնում էթիլ սպիրտը, զլիցերինը, չի յուրացնում մաննիտը, դուցիտը և սորբիտը:

Այսպիսով, միորմարկված շտամների մորֆո-ֆիզիոլոգիական հատկությունների մանրամասն նկարագրությունը ցույց է տալիս, որ մեր ուսումնասիրած շտամները պատկանում են *Saccharomyces* ցեղի տարրեր տեսակներին և նրանց մեծ մասը պատկանում է *Saccharomyces ellipsoideus* (*vini*) տեսակին, որի դերը մեծ է խմորման արդյունաբերության, մասնավորապես, գինեգործության մեջ:

Փ. Գ. Սարսան, Պ. Մ. Ախինյան, Բ. Շ. Կարմյան

О морфофизиологических свойствах некоторых видов дрожжевых организмов

Резюме

Одним из главных вопросов микробиологии является определение вида микроорганизма, ибо от его правильной систематизации зависит назначение того или иного микроорганизма в природе.

Систематике дрожжевых организмов посвящен ряд трудов. К таковым относятся определители Lodder (1934), Diddens und Lodder (1942), Lodder and Kreger Van Rij (1952), Курдяевцева (1954).

В Советском Союзе В. И. Курдяевцевым проведена большая работа по составлению определителя по спороносным дрожжевым организмам.

В этой работе нами проведено изучение морфофизиологических свойств дрожжей, выделенных из различных сортов винограда и вин разных районов Армянской ССР. На основе изучения и выявления культуральных и физиологических свойств дрожжей был определен их видовой состав. При определении рода и вида спороносных дрожжевых организмов мы пользовались определителем Курдяевцева и Lodder and Kreger van Rij.

По морфологическим свойствам изученные нами дрожевые грибки были отнесены к роду *Saccharomyces*, а по биохимическим свойствам к видам: *Saccharomyces chodatii*, *Sacch. oviformis*, *Sacch. steineri*, но большинство штаммов дрожжей было отнесено к виду *Sacch. ellipsoideus (vini)*, который имеет большое производственное значение при первичном брожении виноградного сусла.

P. G. Sarukhanian, H. M. Hakhnian, R. S. Karimian

On the morpho-physiological properties of some Saccharomyces species

Տ Ս Մ Թ Ա Ր Յ

The proper determination of the species is essential to classify microorganisms.

The Saccharomyces that have been isolated from various sorts of Armenian grapes and from their wines, according to their morpho-physiological properties, belong to the chodati, ovoidalis and steineri and mostly to the ellipsoideus species of the Saccharomyces genus.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Красильников Н. А. 1948. О классификации бактерий, «Микробиология», т. XVII, 2, стр. 105.
- Красильников Н. А. 1949. Определитель бактерий и актиномицетов. М.—Л., изд. АН СССР.
- Кудрявцев В. И. 1954. Систематика дрожжей.
- Lodder J. and Kreger Van Rij N. Y. W. 1952. The Yeasts A Taxonomic study, Amsterdam.
- Diddens N. A. und Lodder J. 1942. Die anaskosporogenen Hefen, 11 tell, Amsterdam.
- Lodder J. 1934. Die Anaskosporogenen Hefen, 11 tell, Amsterdam.
- Հայինյան Հ. Մ. 1958. Եարարի բարձր կոնցենտրացիայի ազդեցությունը գինու շաքարասնկերի տեղական շտամների վրա (համական հաղորդում), Միկրոբիոլոգիական ժողովածու, պրակ 10 էլ 181.
- Սարգսյան Փ. Գ., Հայինյան Հ. Մ. 1955. Եարարասնկերի դասի արագակումը միջավայրի տարրերի պայմաններում, Գյուղատնտեսական և արդյունաբերական միկրոբիոլոգիայի հարցերից, պրակ 2 (8), էլ 17.
- Саруханян Ф. Г. и Ахинян Р. М. 1959. Направленное изменение местных рас винных дрожжей в зависимости от различных факторов среды. Институт генетики АН СССР. Труды конференции, т. 1, стр. 389.